Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն թիվ 4
ՀՀ Վայոց ձորի մարզխորհրդի նիստի

ք. Եղեգնաձոր 26.12.2016թ.

Մարզխորհրդի նիստը նախագահում էր ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հ. Սարգսյանը
Քարտուղարում էր ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ Հ. Կարապետյանը

Մարզխորհրդի նիստին մասնակցում են՝ մարզպետի տեղակալները, աշխատակազմի ղեկավարը, համայնքների ղեկավարներ, աշխատակազմի քարտուղարներ, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների ղեկավարներ, նիստին հրավիրված ու մասնակցում են նաև՝ մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներ ու ԶԼՄ ներկայացուցիչներ, ՀԿ-ների նախագահներ:
Մարզպետը մարզխորհրդի մասնակիցներին ներկայացրեց օրակարգը՝
՝

1. ,,ՀՀ Վայոց ձորի մարզի համայնքների 2016 թվականի դեկտեմբերի 26-ի դրությամբ տեղական բյուջեների ամրագրված սեփական եկամուտների հավաքագրման ընթացքի մասին,,:

/Զեկ. ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ Շ. Վարդանյան/

2,,Մարզի համայնքների զարգացման ծրագրերի մասին,,

/Զեկ. ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Ն. Սիմոնյան

3,,Վերջին շրջանում ՀՀ նորմատիվ և գերատեսչական իրավական ակտերում կատարված փոփոխությունների մասին,,

/Զեկ. ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Ն. Մաղաքյան/

Հայտարարություններ

1. ,,Մարզում անասնագլխաքանակի հաշվառման և հատկացված աշնանացանի սերմացուի դիմաց վճարումների մասին,,

/Զեկ. ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Մ. Ներսիսյան/

2. ,,Մարզի համայնքներում նոր ջրագծերի կառուցման հետևանքով առաջացած հողերի գործառնական նշանակության փոփոխման մասին,,

/Զեկ. ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Մ. Մեսրոպյան/

Օրակարգի առաջին հարցի շուրջ ,, ՀՀ Վայոց ձրի մարզի համայնքների 2016 թվականի դեկտեմբերի 26-ի դրությամբ համայնքային բյուջեների ամրագրված սեփական եկամուտների հավաքագրման ընթացքի մասին ,, զեկուցումով հանդես եկավ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսակյան զարգացման վարչության պետ Շ.Վարդանյանը, վերջինս նշեցի, 2016 թվականի տասներկու ամիսների ընթացքում մարզի 29 համայնքների տեղական բյուջներով եկամուտներ են նախատեսվել 1639904.1 հազ. դրամ, տեղական բյուջեներին ամրագրված եկամուտներից հավաքագրվել է 1604209.2 հազ. դրամ, կամ տեղական բյուջեներին ամրագրված եկամուտների հավաքագրումը կատարվել է 97.8%-ով, որից սեփական եկամուտներ՝ նախատեսվել է 576681.5 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 539354.8 հազ. դրամ, կամ կատարվել է 93.5%-ով:.

Համահարթեցման կարգով ՀՀ 2016թ. պետական բյուջեից մարզի համայնքներին տասներկու ամիսների համար նախատեսվել է 954159.8 հազ. դրամ դոտացիա, որն ամբողջությամբ ֆինանսավորվել է:

Հարկային եկամուտների, տուրքերի և ոչ հարկային եկամուտների գծով տասներկու ամիսների համար համայնքների բյուջեներով նախատեսվել և առ 23.12.2016թվականի դրությամբ կատարվել է՝

- Հողի հարկ՝ 70198.6 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 58756.9 հազ. դրամ, կամ կատարվել է 83.7%-ով:
- Գույքահարկ՝ 152433.8 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 167553.6 հազ. դրամ, կամ կատարվել է 109.9 %-ով:
- Պետական տուրքեր 6900.0 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 5933.0 հազ. դրամ, կամ կատարվել է 86.0%-ով:
- Տեղական տուրքեր 21345.8 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 19126.0հազ. դրամ, կամ կատարվել է 89.6 %-ով:
- Գույքի վարձակալություն՝ 263598.4 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 244928.0 հազ. դրամ, կամ կատարվել է 92.9 %-ով:
- Այլ եկամուտներ 55566.2 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 37589.8 հազ. դրամ, կամ կատարվել է 67.7 %-ով:

Հաշվետու ժամանակաշրջանում սեփական եկամուտների հավաքագրումը մարզի միջինից բարձր ցուցանիշներով են կաատարել ՝

Համայնքի անվանումը	**Սեփական եկամուտներ տոկոսներով**
Եղեգնաձոր	117.1
Արենի	112.8
Արտաբույնք	101.4
Գետափ	113.0
Հորբատեղ	102.0
Մալիշկա	102.4
Շատին	103.1
Չիվա	105.9
Ռինդ	112.3

100 տոկոսից ցածր ցուցանիշներով են կատարել՝ Գողթանիկ, Վարդահովիտ,Հերմոն, Եղեգիս, Վերնաշեն, Գլաձոր, Սալլի, Աղավնաձոր, Ագարակաձոր, Աղնջաձոր, Հորս, Արփի, Գնիշիկ, Ելփին, Թառաթումբ, Խաչիկ, Քարագլուխ Վայք, Ջերմուկ համայնքները:

Թվով 20 համայնքներ, որոնք չեն կատարել, թերացել են սեփական եկամուտների հավաքագրման աշխատանքներում, խնդրում ենք լրջորեն զբաղվեն, լուրջ հետևանքներ անեն և գործուն միջոցներ ձեռնարկեն իրենց բյուջեին ամրագրված սեփական եկամուտների կատարման գործին, ապահավվելով 100 տոկոս հավաքագրում:

Ծավալված մտքերի փոխանակությանը մասնակցեցին Եղեգնաձորի, Վայքի, Ջերմուկի, Զառիթափի,Շատինի, Գետափ,Գլաձորի, Ագարակաձորի և Խաչիկի համայնքների ղեկավարները, վերջիններս անդրադարձան սեփական եկամուտների հավաքագրման առկա խնդիրներին,գոյություն ունեցող բազաների ճշգրտման և ձեռնարկված միջոցառումներին ու դրա արդյունքում ակնկալվող սպասելիքներին:

Ելնելով վերոգրյալից մարզխորհուրդը

ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է՝

1. Մարզի համայնքների ղեկավարներին .

ա/ ձեռնարկել գործուն միջոցներ Ձեր համայնքների 2016 թվականի բյուջեներին ամրագրված, ինչպես հարկային, այնպես էլ ոչ հարկային սեփական եկամուտների հավաքագրումը ապահովելու ամբողջությամբ, բյուջեով նախատեսված ծավալներով մինչև տարեվերջ:

2. 2017թ. բյուջեների նախագծերը և բյուջեները կազմելիս՝ մանրակրկիտ ուսումնասիրել Ձեր հարկային բազաները, ճշգրտել վերջիններս և առկա ռեզերվները (մասնավորապես հողի հարկի և գույքահարկի մասով՝ տեղեկատվական շտեմարանները և առկա ապառքները), որի արդյունքում սեփական եկամուտների մասով նախատեսել հաշվարկային ցուցանիշների 10-20%-ի աճ:
3. Համայնքների բյուջեների և զարգացման ծրագրերի նախագծերը քննարկել բնակչության և ՀԿ-երի հետ՝ կազմակերպելով հանրային լսումներ:
4. Բյուջեների նախագծերում տեղական տուրքերի և վճարների ցուցանիշները սահմանելիս առաջնորդվել ՀՀ Ազգային ժողովի կողմից երկրորդ ընթերցմամբ ընդունված «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի դրույթներով, որի էլեկտրոնային տարբերակը տրամադրվել է Ձեզ:

Ամփոփիչ խոսքով հանդես եկավ **մարզպետը, ով նշեց,** մարզի համայքների տեղական բյուջեներին ամրագրված սեփական եկամուտների կատարման ընթացքը առ 26.12.2016 թվականի կտրվածքով, արձանագրում ենք, որ եկամուտները կատարվել են 97.8 տոկսով, որը բավարար չէ:Ուզում եմ հատկապես անրադառնալ այն թվով 20 համայնքներին, որոնք թերացել են սեփական եկամուտների հավաքագրմամբ, նշելով որ թերակատարումները հիմնականում հողի հարկի և վարձավճարի գծով են առաջացել: Տարվա ավարտին մնացել է ընդամենը 4-5 օր, ուստի առաջարկեց համայնքի ղեկավարներին մոբիլիզացնել ուժերը խիստ ուշադրություն դարձնել սեփական եկամուտների հավաքագրման աշխատանքներին, հիմնականում սևեռվելով չկատարված եկամտատեսակների վրա, խորությամբ ուսումնասիրելով չկատարման պատճառները:Այնուհետև նախագահողը մարզխորհրդի մասնակիցներին տեղեկացրեց,որ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարը 2017 թվականի համար բոլոր համայնքների առջև խնդիր է դրել 10-20 տոկոսով ավելացնել սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշները:

Օրակարգի երկրոդ հարցը ներկայացնելու համար նախագահողը ամբիոնի մոտ հրավիրեց ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Ն.Սիմոնյանին, վերջինս նշեց,որ համայնքների զարգացման ծրագրերը ճիշտ և իրատեսական կազմելու նպատակով ՀՀ ՏԿ և զարգացման նախարարությունը պատրաստել և համայնքներին է տրամադել ծրագրերի մեթոդաբանությունը՝ առաջարկելով առաջնորդվել ցուցումներով և ձևանմուշներով:

Ընթացիկ տարվա նոյեմբերի 24-ին մարզխորհրդի նիստում մեկ անգամ ևս ներկայացվեց համայնքների զարգացման ծրագրերի մշակման մեթոդաբանությունը:

Այնուհետև մարզպետարանի համապատասխան վարչությունները անհրաժեշտ մեթոդական, խորհրդական ու գործնական օգնություն են ցուցաբերել համայնքներին՝ զարգացման ծրագրերը պահանջվող մեթեդոբանությանը համահունչ կազմելու ուղղությամբ:

Կատարված աշխատանքների վերլուծությունից պարզվում է հետևյալը՝

Մարզի 29 համայնքներից 3-ում (Հերմոն, Չիվա, Սալլի) ավարտվել են նպատակների արդյունքների և գործողությունների պլանավորման փուլերը, 16 համայնքում (Եղեգնաձոր, Վայք, Ջերմուկ, Աղավնաձոր, Արենի, Արփի, Գետափ, Գնիշիկ, Գողթանիկ, Ելփին, Եղեգիս, Զառիթափ, Թառաթումբ, Հորբատեղ, Հորս, Ռինդ) զարգացման ծրագրերը գտնվում են ծրագրերի իրականացման գնահատման փուլում, 10 համայնքում (Ագարակաձոր, Արտաբույնք, Աղնջաձոր, Գլաձոր, Խաչիկ, Մալիշկա, Շատին, Վարդահովիտ, Վերնաշեն, Քարագլուխ) զարգացման ծրագրերը հաստատվել են սահմանված կարգով:

Եզրափակիչ խոսքով հանդես եկավ նախագահողը, ով նշեց, որ համայնքային նշանակության խնդիրները լուծելու համար յուրաքանչյուր համայնքի ղեկավար պետք է մշակի և ավագանու հաստատմանը ներկայացնի համայնքի զարգացման ծրագիրը:

Համայնքի զարգացման ծրագիրը պետք է համահունչ լինի Ազգային ժողովի և կառավարության կողմից հավանության արժանացած մարզային,տարածաշրջանային զարգացման և այլ ռազմավարական ծրագրերին:

Ծրագրի մշակման համար ՀՀ ՏԿ և զարգացման նախարարությունը վերջնածամկետ էր սահմանել մինչև 2016թ դեկտեմբերի 26-ը,քանի որ այն չի իրականացվել մարզպետը թերացած համայնքների ղեկավարներին առաջարկեց առաջիկա 1-2 օրվա ընթացքում հրավիրել ավագանու նիստեր, հաստատել համայնքների հնգամյա զարգացման ծրագրերը ու դրանք ներկայացնել մարզպետարանի աշխատակազմ,ինչը հնարավորություն կտա մինչև 2017թ հունվարի 20-ը կազմել և ՀՀ ՏԿ և զարգացման նախարարություն ներկայացնել մարզի զարգացման ռազմավարությունը

,,Վերջին շրջանում ՀՀ նորմատիվ և գերատեսչական իրավական ակտերում կիատարված փոփոխությունների մասին,, զեկուցմամբ հանդես եկավ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Ն. Մաղաքյանը ,ով նշեց, որ <u>ներկայացվում են ՀՀ իրավական ակտերում կատարված փոփոխությունները, լրացումները և նորությունները, որոնք առնչվում են համայնքի ղեկավարի և ավագանու լիազորությունների իրականացմանը:</u>

- 2016թ. հոկտեմբերի 4-ի թիվ ՀՕ-150–Ն օրենքով փոփոխություն է կատարվել <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածում, որն ուժի մեջ է մտել 2016թ. նոյեմբերի 5-ից:

Փոփոխությամբ արդեն հստակ սահմանվում են ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի համար գանձվող տեղական տուրքի չափն ըստ հիմնական և ոչ հիմնական շինությունների զբաղեցրած տարածքի: Փոփոխվել է նաև դրույքաչափի սահմանման ձևը, նախկին ամբողջական թվերի փոխարեն այժմ յուրաքանչյուր եռամսյակի համար դրույքաչափը սահմանվում է

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 10.001 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շ ինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 13.001 դրամ, և այլն:

Նույնը վերաբերվում է նաև ծխախոտի վաճառքի թույլտվության համար սահմանվող տեղական տուրքի դրույքաչափերին:

Մյուս փոփոխությամբ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, ինչպես նաև տեխնիկական հեղուկների վաճառքի համար տեղական տուրք սահմանվում է նաև մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում վաճառք իրականացնելու դեպքում:

Հաջորդ փոփոխությամբ սահմանվել են տարբերակումներ համայնքի տարածքում հանրային ս ննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար՝ ըստ շինությունների զբաղեցրած տարածքների:

«գա) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղականտուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մ ինչև 5.001 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև 10.001 դրամ և այլն,

ոչ հիմնական շինությունների ներսում՝

Մյուս կարևոր փոփոխությամբ սահմանվում է, որ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի և 5-րդ կետի «գա» ենթակետի յուրաքանչյուր կետով սահմանված դրույքաչափերի ստորին սահմանները չեն կարող պակաս լինել այդ կետերին նախորդող դրույքաչափերի վերին սահմաններից:

2016թ. սեպտեմբերի 28-ին փոփոխություններ են կատարվել ՀՀ հողային օրենսգրքում, որոնք ուժի մեջ են մտել նոյեմբերի 5-ից:
Մասնավորապես օրենսգրքի 63-րդ հոդվածում պետության և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման գոյություն ունեցող երեք եղանակներին ավելացվել է նաև հողամասերը փոխանակությամբ օտարելու եղանակը:
Օրենսգրքի 69-րդ հոդվածում փոփոխվել են աճուրդը չկայացած համարվելու հիմքերը, մասնավորապես նախկինում մասնակցության մեկ հայտ ներկայացվելու դեպքում աճուրդը համարվում էր չկայացած, իսկ փոփոխությամբ աճուրդը չկայացած է համարվում մասնակցության համար հայտ չներկայացվելու դեպքում: Նույնը վերաբերվում է նաև հողամասը մրցույթով վարձակալությամբ կամ կառուցապատման իրավունքով տրամադրելուն: Նախկինում մեկ հայտ ներկայացված լինելու դեպքում մրցույթը չկայանալը փոխարինվել է ընդհանրապես հայտ չներկայացնելու դեպքով:

Եզրափակիչ խոսքով հանդես եկավ նախագահողը, ով նշեց 2016 թվականին կատարված օրենսդրական փոփոխությունները շատ կարևոր են անհրաժեշտ ղեկավարվել դրանց պահանջներով: Առաջարկեց աշխատակազմի իրավաբանական և հողաշինության ու հողօգտագործման բաժիններին համատեղ նախապատրաստել ու համայնքներ ուղարկել համապատասխան շրջաբերական նամակ:

Հայտարարություններ՝

1. **,,Մարզում անասնագլխաքանակի հաշվառման և հատկացված աշնանացանի սերմացուի դիմաց վճարումների մասին.. հայտարարությամբ հանդես եկավ աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Մ. Ներսիսյանը**: Վերջինս նշեց,որ առ 26.12.2016թ դրությամբ 2015թ աշնանացան ցորենի մարզի պարտքը կազմում է 4.937.860 դրամ, որից՝ 3.300հազ դրամը Հերհերի, 448 հազ դրամը Գնդեվազի ,686 հազ դրամը Ազատեկի, 180 հազ դրամը Զեդեաի և 298 հազ դրամը Խաչիկի համայնքի պարտքերն են:Բանախոսը նշեց,որ համաձայն վաղօրոք շահառուների հետ կնքված պայմանագրերի՝ սերմացուի արժեքները պետք է վճարվեր մինչև ս/թ նոյեմբերի 1-ը, ինչը չի կատարվել:Առաջարկեց համայնքների ղեկավարներին ներգործուն միջոցներ ձեռնարկել և ամենասեղմ ժամկետում մարել պարտքերը:

Մ.Ներսիսյանը անդրադարձավ նաև մարզում 2017թ հունվարի 1-ի դրությամբ առկա անասունների համատարած հաշվառման խնդրին, նշեց, որ 2017թ հունվարի 1-ից մինչև 17-ը մարզում իրականացվելու է անասնագլխաքանակի համատարած հաշվառում, խնդրեց համայնքների ղեկավարներին ըստ ամենայնի աջակցել հաշվառմանը:

Ամփոփելով հայտարարությունը նախագահողը հույս հայտնեց, որ համապետական նշանակության այս կարևոր գործին համայնքների ղեկավարներն ու վերջիններիս աշխատակազմերը հարցին լրջորեն կմոտենան և կաջակցեն հաշվառմանը:

''Մարզի համայնքներում նոր ջրագծերի կառուցման հետևանքով առաջացած հողերի գործառնական նշանակության փոփոխման մասին'' հայտարարությամբ հանտես եկավ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Մ. Մեսրոպյանը: Վերջինս նշեց. որ հայտարարությունը հիմնականը վերաբերվում է համայնքներում նոր ոռոգման ցանցերի կառուցմանը:

Այն համայնքներում որտեղ կառուցվել են նոր ոռոգման ցանցեր, որի արդյունքում նոր ջրովի հողեր են ավելացել՝ ուստի առաջարկվում է համայնքի ղեկավարներին՝ ղեկավարվել 17 սեպտեմբերի 2009 թվականի թիվ 1066-Ն որոշման պահանջներով, այն է գյուղատնտեսական ցածրարժեք անջրդի հողատեսքերը բարձրարժեք ջրովի հողատեսքերի փոխադրելու դեպքում համայնքի ղեկավարը կայացնում է որոշում , որի մեկ օրինակը 5 օրվա ընթացքում ներկայացնում է կադաստրի տարածքային ստորաբաժանում և գրանցված փոփոխությունները արտացոլում յուրաքանչյուր տարվա հողային հաշվեկշռում:

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հ. Սարգսյանը հանդես եկավ եզրափակիչ խոսքով, վերջինս մարզխորհրդի մասնակիցներից շնորհակալություն հայտնեց համատեղ մեկ տարվա

աշխատանքի համար, ելնելով ՀՀ վարչապետի հետ վերջերս մարզում կայացած հանդիպման հանձնարարականներից առաջարկեց հիմնովին փոխել կառավարման աշխատաոճն ու մտածելակերպը, հանդես գալ նախաձեռնություններով: Հույս հայտնեց, որ մարզխորհրդի անդամները կաշխատեն կրկնապատկված եռանդով և կհասնեն նորանոր հաջողությունների:Վերջում մարզպետը շնորհավորեց մարզխորհրդի բոլոր մասնակիցներին գալիք Ամանորի և Սուրբ Ծննդյան տոնի առթիվ:

ՀՀ Վայոց ձորի մարզպետ՝ **Հ. ՍԱՐԳՍՅԱՆ**